

Տարածքային զարգացման անհավասարության պատճառներն ու հետևանքները ՀՀ-ում

Արմենակյան Ռուզաննա Ռ.

Տնտեսագիտության տեսության ամբիոնի տ.գ.թ., դոցենտ

Տնտեսագիտական ֆակուլտետ, ՀՊՏՀ (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0005-8889-4014>

armenakyanruzanna7@gmail.com

Բաղդասարյան Լիլիթ Լ.

Տնտեսագիտության տեսության ամբիոնի տ.գ.թ., դասախոս

Տնտեսագիտական ֆակուլտետ, ՀՊՏՀ (Երևան, ՀՀ)


 <https://orcid.org/0000-0001-9767-7744>

baghdasaryan_lilit@bk.ru

Հակոբյան Լիանա Լ.

Տնտեսագիտության տեսության ամբիոնի տ.գ.թ., դոցենտ

Տնտեսագիտական ֆակուլտետ, ՀՊՏՀ (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0000-0001-6076-2486>

hliana@list.ru

ՀՏԳ 332.1(479.25); EDN: XXDCMW; JEL: I31, J6, J64, E24

DOI: 10.58587/18292437-2025.3-269

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ տարածքային անհամաչափ զարգացում, կենսամակարդակ, սոցիալ-տնտեսական զարգացում, գործազրկություն, արտագաղթ

Экономические причины и последствия неравенства территориального развития в

Республике Армения

Арменакян Рузанна Р.

к.э.н., доцент кафедры экономической теории, Экономический факультет, АГЭУ (Ереван, РА)

Багдасарян Лилит Л.

к.э.н., преподаватель кафедры экономической теории, Экономический факультет,

АГЭУ (Ереван, РА)

Акопян Лиана Л.

к.э.н., доцент кафедры экономической теории, Экономический факультет, АГЭУ (Ереван, РА)

Аннотация. Сегодня неравномерность территориального развития косвенно влияет на развитие экономики государства, формирование трудовых ресурсов и социальную стабильность. Изучение причин, последствий и механизмов преодоления территориального неравенства представляет собой одну из ключевых задач в контексте формирования эффективной региональной политики, ориентированной на обеспечение устойчивого социально-экономического развития государства. В течение последних двух десятилетий значительная концентрация экономической активности и ресурсов в столице – городе Ереван – обусловила депопуляцию региональных населённых пунктов и снижение качества жизни в них. Указанные тенденции существенно затрудняют реализацию национальных стратегий, направленных на сокращение бедности, выравнивание территориального развития и достижение долгосрочной социальной и экономической устойчивости.

Ключевые слова и словосочетания: неравномерность территориального развития, уровень жизни, социально-экономическое развитие, безработица, эмиграция

Economic Causes and Consequences of Territorial Development Inequality in the Republic of

Armenia

Armenakyan Ruzanna R.

PhD Associate Professor of the Faculty of Economics, Chair of Theory of Economics, ASUE (Yerevan, RA)

Baghdasaryan Lilit L.

PhD Assistant Professor of the Faculty of Economics, Chair of Theory of Economics, ASUE (Yerevan, RA)

Hakobyan Liana L.

PhD Associate Professor of the Faculty of Economics, Chair of Theory of Economics, ASUE (Yerevan, RA)

Abstract. In the contemporary context, uneven territorial development exerts a significant indirect influence on the national economy, the formation and distribution of labor resources, and the overall stability of society. Addressing the

causes, consequences, and potential solutions to territorial inequality has become a central priority in the development of effective regional policy aimed at promoting sustainable socio-economic growth.

Over the past two decades, the pronounced concentration of economic activity and resources in the capital city, Yerevan, has contributed to the depopulation of regional settlements and a noticeable decline in living standards outside the capital. These dynamics pose serious challenges to the effective implementation of national strategies focused on poverty reduction, balanced territorial development, and the achievement of long-term socio-economic resilience.

Keywords and phrases: disproportionate territorial development, standard of living, socio-economic development, unemployment, emigration

Հայաստանն ունենալով յուրօրինակ աշխարհագրական դիրք և հարուստ պատմամշակութային ժառանգություն, այսօր բախվում է տարածքային անհամաչափ զարգացման հիմնախնդրի հետ: Տնտեսական ակտիվության, սոցիալական ծառայությունների մատչելիության և բազային ենթակառուցվածքների կենտրոնացումը հիմնականում մայրաքաղաք Երևանում և մի քանի խոշոր քաղաքներում խորացրել է տարածքային զարգացման անհամաչափությունը մեր երկրում: Մինչդեռ բազմաթիվ մարզային քաղաքներ և գյուղական համայնքներ շարունակում են գործել տնտեսական ստագնացիայի պայմաններում, որը բնորոշվում է տնտեսական աճի տեմպի, ներդրումային ակտիվության նվազմամբ և տեղական գործարար միջավայրի թուլացմամբ: Այս կառուցվածքային անհավասարակշռությունը հանգեցնում է տարածքային սոցիալական անհավասարության խորացման, բնակչության կրճատման և արտագաղթի աճի, ինչը լուրջ մարտահրավեր է երկրի համաչափ և կայուն զարգացման ռազմավարություններին: ՀՀ տնտեսության հիմնական ոլորտները, ինչպիսիք են արդյունաբերությունը, առևտուրը, ծառայությունների և ՏՏ ոլորտները կենտրոնացած են Երևանում և մայրաքաղաքի արվարձաններում: Մեծ թվով աշխատատեղեր ունեցող Երևանը հենց դրանով էլ գրավում է մարզային բնակիչներին, հատկապես երիտասարդությանը, ովքեր ոչ միայն Երևան են ժամանում աշխատանքի տեղավորվելու, այլև հե-

տազայում քաղաքում բնակարան ձեռք բերելու և մշտական բնակություն հաստատելու նպատակով: Ահա հենց դրանով է պայմանավորված, որ վերջին տարիներին ՀՀ Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերում արձանագրվել է գործազրկության, Ծիրակի մարզում՝ աղքատության, իսկ Սյունիքի մարզում՝ արտագաղթի (բնակչության նվազման) բարձր ցուցանիշներ: Լրջագույն խնդիրների առջև են կանգնած նաև գյուղական համայնքները, որոնց միջից առանձնանում են հատկապես ենթակառուցվածքներում անբավարար ներդրումները, կրթական և առողջապահական ծառայությունների ցածր որակը: Ժամանակակից ճանապարհների բացակայությունը, համացանցի սահմանափակ հասանելիությունը և բարձրակարգ մասնագետների պակասը դժվարեցնում են մարզային ձեռնարկատիրության և զբոսաշրջության զարգացումը, որն էլ, իր հերթին, հանգեցնում է գյուղական տարածքների դեգրադացմանը, մարզային բնակավայրերի կենսամակարդակի և սոցիալական ակտիվության նվազեցմանը:

Գյուղատնտեսության ոլորտը ՀՀ տնտեսության առանցքային ոլորտներից է, և արտահայտում է երկրի տարածքային անհամաչափության զարգացման հիմնախնդիրները: ՀՀ գյուղատնտեսական ոլորտի անհամաչափ զարգացման վերաբերյալ պատկերացում կազմելու համար ուսումնասիրենք ՀՀ մարզերի և մայրաքաղաք Երևանի գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալները 2020-2023 թթ.:

Աղյուսակ 1. Գյուղատնտեսության համախառն արտադրանքն ըստ ՀՀ մարզերի, 2020 – 2023 թթ.

(մլրդ ՀՀ դրամ) [5]

	2020	2021	2022	2023
Ընդամենը ՀՀ, որից՝	819.3	933.0	1 021.4	948.0
Արագածոտն	75.6	87.1	101.2	94.3
Արարատ	125.0	140.9	149.7	138.1
Արմավիր	173.9	211.0	224.9	206.9
Գեղարքունիք	100.5	113.6	119.1	109.5
Լոռի	65.1	78.7	88.5	84.1
Կոտայք	73.9	78.3	86.3	82.1
Շիրակ	84.9	87.2	105.0	93.3
Սյունիք	54.7	59.4	65.1	57.8
Վայոց Ձոր	21.1	21.9	23.9	22.2
Տավուշ	36.2	45.4	46.0	47.6

Աղյուսակում ներկայացված ցուցանիշներից, որոնք ընդգրկում են 2020 – 2023 թթ. ընկած ժամանակահատվածը, պարզ երևում է, որ ամբողջ ՀՀ-ում, ինչպես նաև որոշ մարզերում գյուղատնտեսության համախառն արտադրանքն ունեցել է անկայուն և ոչ դինամիկ աճ: 2020 – 2022 թթ. ընթացքում շարունակական դինամիկ աճից հետո, 2023 թվականին գյուղատնտեսական համախառն արտադրանքն արձանագրել է անկում ինչպես ամբողջ ՀՀ-ում, այնպես էլ ՀՀ մարզերում (բացառությամբ Տավուշի):

Տարածքային համաչափ զարգացումը պայմանավորված է նաև շինարարության ոլորտի զարգացմամբ: Բնակարանային շինարարությունը, բազմաբնակարան շենքերի շահագործման հանձնումը և շինմոնտաժային աշխատանքները մեծապես նպաստում են տարածքային զարգացմանը: Ստորև ներկայացնենք 2020 – 2023 թթ. ընթացքում ՀՀ մարզերում և մայրաքաղաք Երևանում իրականացրած շինարարական աշխատանքների ցուցանիշների վերլուծության արդյունքները:

Աղյուսակ 2. Շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսը ՀՀ մարզերում և ք. Երևանում, 2020 – 2023 թթ. (քառ. մ) [6]

	2020	2021	2022	2023
Ընդամենը ՀՀ, որից՝	189 868	273 254	322 216	697 563
ք. Երևան	114 395	117 184	147 512	410 829
Արագածոտն	5 688	8 550	11 967	17 366
Արարատ	21 088	39 624	41 661	77 732
Արմավիր	-	-	-	15 431
Գեղարքունիք	1 450	1 400	1 630	376
Լոռի	1 196	2 609	2 501	6 329
Կոտայք	40 931	97 787	102 672	154 020
Ծիրակ	1 241	381	2 066	1 189
Սյունիք	288	146	2 215	629
Վայոց Ձոր	993	-	5 613	2 989
Տավուշ	2 598	5 573	4 379	10 673

Աղյուսակում ներկայացված ցուցանիշներից մենք տեսնում ենք, որ 2020 – 2023 թթ. ընթացքում ՀՀ մարզերում և մայրաքաղաք Երևանում արձանագրվել է շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսի ծավալի դինամիկ աճ՝ 2020 թվականի

ցուցանիշի համեմատ աճելով 507 695 քառ. մ-ով կամ 3,6 անգամ:

2020 – 2023 թթ. ընթացքում ՀՀ մարզերում և մայրաքաղաք Երևանում ընթացիկ գներով շինարարության ծախսերը ներկայացված են հաջորդ աղյուսակում:

Աղյուսակ 3. Շինարարությունն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2020 – 2023 թթ. (մլն ՀՀ դրամ ընթացիկ գներով) [6]


	2020	2021	2022	2023
Ընդամենը ՀՀ, որից՝	413 830	470 079	541 110	619 686
ք. Երևան	242 248	195 720	234 231	278 126
Արագածոտն	14 306	20 536	26 180	19 801
Արարատ	22 863	36 820	32 023	49 644
Արմավիր	18 854	34 903	33 000	23 447
Գեղարքունիք	19 012	25 032	24 553	31 577
Լոռի	15 422	20 257	22 469	29 101
Կոտայք	23 970	48 068	63 751	80 452
Ծիրակ	15 255	23 991	25 118	32 339
Սյունիք	21 091	44 533	52 549	41 536
Վայոց Ձոր	8 254	9 929	13 485	12 010
Տավուշ	12 552	10 286	13 748	21 648

Նկատենք, որ դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ-ում շինարարության ծախսերն արձանագրել են դինամիկ աճ: Չնայած COVID-19-ի սահմանափակումների արդյունքում ՀՀ տնտեսության որոշ ոլորտներում արձանագրված կորուստներին և ցուցանիշների անկմանը, ՀՀ շինարարության ոլորտում հակառակ պատկերն է արձանագրվել:

2023 թվականին 2022 թվականի համեմատ ՀՀ շինարարության ոլորտում ծախսերն աճել են մոտ 78.5 մլրդ ՀՀ դրամով կամ 114,8%-ով: Նույն ժամանակահատվածում մայրաքաղաք Երևանում շինարարության ծախսերն աճել են 43.8 մլրդ ՀՀ դրամով կամ 119,2%-ով: Ինչ վերաբերում է ՀՀ մարզերին, ապա 2023 թվականին

2022 թվականի համեմատ շինարարության ծախսերի տոկոսային հարաբերակցությամբ առաջատար են եղել Տավուշի (157,5% աճ), Արարատի (155,1% աճ), Լոռու (129,6% աճ), Շիրակի (128,9% աճ) և Գեղարքունիքի (128,6% աճ) մարզերը: 2023 թվականին, նախորդ տարվա համեմատ շինարարության ծախսերի ցածր ցուցանիշ է արձանագրվել Սյունիքի (79,1% աճ), Արագածոտնի (75,7% աճ) և Արմավիրի (71,2% աճ) մարզերում:

ՀՀ մարզերի և մայրաքաղաք Երևանի 2020-2023 թթ. շինարարության ծախսերի դինամիկայի փոփոխությունը ներկայացված է գծապարկեր 1:



Գծապատկեր 1. Շինարարությունն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2020 և 2023 թվականների (մլն ՀՀ դրամ) [6]

Գծապատկերից պարզ երևում է, որ մայրաքաղաք Երևանը շինարարության ծախսերի գծով դիտարկվող ժամանակահատվածում բացարձակ առաջատար է եղել: Նշված ժամանակահատվածում շեշտակի աճ է արձանագրվել Կոտայքի մարզում, որտեղ 2020 – 2023 թթ. ընկած ժամանակահատվածում շինարարական ծախսերն աճել են 56.4 մլրդ ՀՀ դրամով: Երրորդ տեղում Արարատի մարզն է, որտեղ նշված ժամանակահատվածում շինարարության ծախսերն աճել են մոտ 26.7 մլրդ ՀՀ դրամով:

Տարածքային համաչափ զարգացման գործում մեծ դեր և նշանակություն ունի աշխատանքային ոլորտը:

2010–2019 թթ. ժամանակահատվածում Հայաստանի տնտեսությունը բնութագրվում էր յուրաքանչյուր մարտահրավերներով: Տնտեսական

ակտիվության նվազման ֆոնին գրանցվել էր ծանր անկում, որը ուղեկցվում էր գործազրկության մակարդակի աճով, նվազագույն աշխատավարձի ցածր մակարդակով և բնակչության արտագաղթի զգալի ծավալներով: Ծատ քաղաքացիներ երկիրը լքում էին ժամանակավոր կամ մշտական աշխատանքի նպատակով՝ արտասահմանում բարելավելու իրենց սոցիալ-տնտեսական պայմանները: Այս գործընթացների զուգընթաց երկրում նկատվում էր աղքատության աճի հետևողական միտում՝ արտահայտված զգալի տարածմամբ և խորությամբ:

Գործազրկության հետ կապված այս բացասական միտումները պահպանվեցին նաև 2020–2023 թթ.՝ չնայած որոշ ճնշող քաղաքական և տնտեսական բարեփոխումների իրականացվմանը:

Աղյուսակ 4. Աշխատուժի պահանջարկն ըստ չ՛ մարզերի և ք. Երևանի, 2020 – 2023 թթ. ղեկոտները (մարդ) [6]

	2020	2021	2022	2023
Ընդամենը չ՛, որից՝	1203	2207	2384	3621
ք. Երևան	480	938	1258	2079
Արագածոտն	64	128	172	258
Արարատ	62	170	119	226
Արմավիր	11	10	14	42
Գեղարքունիք	41	92	67	141
Լոռի	80	226	157	223
Կոտայք	153	162	84	68
Շիրակ	106	228	290	319
Սյունիք	56	79	80	140
Վայոց Ձոր	53	99	56	51
Տավուշ	97	75	87	74

2020 – 2023 թթ. ղեկոտները ամիսներին չ՛ մարզերում և մայրաքաղաք Երևանում աշխատուժի պահանջարկը հիմնականում ունեցել է դինամիկ աճ: 2023 թվականի վերջին (ղեկոտներ ամսին) այն ավելի բարձր ցուցանիշներ է արձանագրել հատկապես մայրաքաղաք Երևանում (2079 մարդ), Շիրակի (319 մարդ), Արա-

գածոտնի (258 մարդ), Արարատի (226 մարդ) և Լոռու (223 մարդ) մարզերում:

Դիտարկվող ժամանակահատվածում այլ պատկեր է արձանագրվել չ՛ մարզերի և մայրաքաղաք Երևանի աշխատուժի առաջարկի ցուցանիշում:

Աղյուսակ 5. Աշխատուժի առաջարկն ըստ չ՛ մարզերի և ք. Երևանի, 2020 – 2023 թթ. ղեկոտները (մարդ) [6]

	Աշխատանք փնտրողներ				նրանցից գործազուրկներ			
	2020	2021	2022	2023	2020	2021	2022	2023
Ընդամենը չ՛, որից՝	87999	86396	70544	64190	61320	58153	48561	46019
ք. Երևան	12427	10170	6939	6165	7463	6186	4305	4361
Արագածոտն	5053	5454	5249	5688	3136	3048	2775	2998
Արարատ	8623	9513	9076	9453	5232	5240	4520	4941
Արմավիր	8661	8511	6944	6307	5695	5277	4385	4087
Գեղարքունիք	6104	5858	4535	4445	4497	4385	3752	3660
Լոռի	10112	9411	8079	7351	9217	8715	7447	6718
Կոտայք	9321	9584	8101	8777	5904	5797	5269	5734
Շիրակ	17281	17335	13741	7371	12314	11665	9429	6007
Սյունիք	3201	3353	2696	2517	2442	2454	2145	2195
Վայոց Ձոր	1328	1541	999	1364	1062	1088	737	1091
Տավուշ	5888	5666	4185	4752	4358	4298	3797	4227

2020 – 2023 թթ. ընկած ժամանակահատվածում չ՛ մարզերում և մայրաքաղաք Երևանում աշխատանք փնտրողների և նրանցից պաշտոնապես գործազուրկ գրանցվածների թիվն էապես նվազել է, ինչը կարող է պայմանավորված լինել տարբեր գործոններով, ինչպես արտագաղթի ծավալների մեծացմամբ, այնպես էլ նոր աշխատավայրերի ստեղծմամբ և վերջիններիս՝ աշխատանքի տեղավորմամբ:

Միևնույն ժամանակ մենք տեսնում ենք, որ 2020 – 2023 թթ. ընկած ժամանակահատվածում դինամիկ կերպով նվազել են չ՛-ում աշխատանք փնտրողների թիվը՝ 2020 թվականի 87999 աշ-

խատանք փնտրողի փոխարեն 2023 թվականին աշխատանք փնտրողների թիվը կազմել է 64190 մարդ: Այլ կերպ ասած, դիտարկվող ժամանակահատվածում աշխատանք փնտրող մարդկանց թիվը նվազել է 23809-ով կամ մոտ 1,3 անգամով: Նույն ժամանակահատվածում գործազուրկների թիվը ևս նվազել է՝ 2020 թվականի 61320 գործազուրկի փոխարեն 2023 թվականին կազմելով 46019 կամ նվազելով 15301-ով (մոտ 1,3 անգամ):


Դիտարկվող ժամանակահատվածում այլ պատկեր է արձանագրվել չ՛ որոշ մարզերում: Ի տարբերություն մայրաքաղաք Երևանի և մյուս

մարզերի, Արագածոտնի և Արարատի մարզերում աշխատանք փնտրողների թիվը պահպանել է բարձր ցուցանիշը, մինչդեռ մայրաքաղաքում և մյուս մարզերում արձանագրվել է աշխատանք փնտրողների թվի նվազում:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում պաշտոնապես գործազուրկ ճանաչվածների թիվը նվազել է մայրաքաղաք Երևանում և մի շարք մարզերում: Սակայն գործազրկության մակարդակը հիմնականում բարձր է պահպանվել Արագածոտնի, Արարատի, Կոտայքի, Սյունիքի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերում: 2023 թվականին նախորդ տարվա համեմատ Արագածոտնի մարզում գործազրկությունն աճել է 8%-ով, Արարատի մարզում՝ 9,3%-ով, Կոտայքում՝ 8,8%-ով, Սյունիքում՝ 2,3%-ով, մայրաքաղաք

Երևանում՝ 1,3%-ով, իսկ Վայոց Ձորի և Տավուշի մարզերում 1,5 և 1,1 անգամ՝ համապատասխանաբար:

2023 թվականին 2022 թվականի համեմատ ՀՀ մարզերում և մայրաքաղաք Երևանում պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակի փոփոխությունը ներկայացված է գծապատկեր 2-ում: Գծապատկերից պարզ երևում է, որ 2023 թվականի վերջին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գործազրկությունը բարձր մակարդակում է եղել Վայոց ձորի մարզում (մոտ 148%): Այս ցուցանիշով երկրորդ տեղում է Տավուշի մարզը՝ մոտ 111%-ով, իսկ երրորդ տեղը զբաղեցնում է Արարատի մարզը՝ 109,3%-ով:



Գծապատկեր 2. Պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակի փոփոխությունն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2023 թ. / 2022 թ. դեկտեմբեր (%)

Գծապատկերից պարզ է դառնում, որ 2023 թվականին 2022 թվականի համեմատ գործազրկության ցածր մակարդակ է արձանագրվել

Շիրակի մարզում, որտեղ պաշտոնապես գործազուրկ գրանցված եղել է աշխատանք փնտրողների 63,7%-ը:

Աղյուսակ 6. Աշխատողների թվաքանակն ըստ ՀՀ մարզերում և ք. Երևանում, 2022 – 2023 թթ. IV եռամսյակի (մարդ) [7]

	Ընդամենը՝ մարդ		%	
	2022	2023	2023 / 22 թթ.	Ընդամենի նկատմամբ
Ընդամենը ՀՀ, որից՝	706444	741571	105,0	100
ք. Երևան	490580	521318	106,3	70,3
Արագածոտն	12324	12470	101,2	1,7
Արարատ	28613	27285	95,4	3,7
Արմավիր	25096	26085	103,9	3,5
Գեղարքունիք	16733	17249	103,1	2,3
Լոռի	27120	28316	104,4	3,8
Կոտայք	37728	38995	103,4	5,3
Շիրակ	24657	25609	103,9	3,5
Սյունիք	23848	24010	100,7	3,2
Վայոց Ձոր	6809	6820	100,2	0,9
Տավուշ	12936	13414	103,7	1,8

Ներկայացված տվյալներից պարզ է դառնում, որ վերջին տարիներին, մասնավորապես 2022 – 2023 թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ-ում, ընդհանուր առմամբ, աշխատողների թվաքանակն աճ է արձանագրել: 2023 թվականին նախորդ տարվա համեմատ աշխատողների թվաքանակը ՀՀ-ում աճել է 105%-ով, մայրաքաղաք Երևանում՝ 106,3%-ով: Բարձր ցուցանիշներ են արձանագրվել նաև որոշ մարզերում, մասնավորապես Լոռու (104,4%-ով), Արմավիրի (103,9%-ով), Ծիրակի (103,9%), Տավուշի (103,7%-ով) և Կոտայքի (103,4%-ով) մարզերում:

ՀՀ-ում տարածքային անհամաչափ զարգացման լրջագույն խնդիրներից մեկը պայմանավորված է հանրապետությունում առկա ժողովրդագրական հիմնախնդրով, արտագաղթի ծավալների աճով, անկայուն ծնելիությանը, ներքին միգրացիայով և այլ ցուցանիշներով: 2023 թ. Հունվարի 1-ի դրությամբ, ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի փոխանցած տվյալների, Հայաստանի Հանրապետության մշտական բնակչությունը կազմել է 2,9 մլն:

Հարկ է նշել, որ ժողովրդագրական գործընթացները Հայաստանում պայմանավորված են նաև տարածքային առանձնահատկություններով: ՀՀ մարզերում բնակչության տեղաբաշխվածությունն ու տեղաշարժը պայմանավորող գործոնները հիմնականում ունեն սոցիալ-տնտեսական բնույթ: Մարզային բնակավայրերի ոչ բավարար բարենպաստ լինելու, ինչպես նաև աշխատանքի ցածր վարձատրության հանգամանքները նպաստում են մարզերի բնակիչների՝ դեպի Երևան կամ արտասահմանյան երկրներ արտագաղթին: Բնականաբար դա պայմանավորված է զարգացման հիմնական շեշտը Երևան քաղաքի վրա դնելու հանգամանքով և մյուս մարզային քաղաքների ու բնակավայրերի անհամաչափ զարգանալով:

Ստորև ներկայացնենք 2020 – 2023 թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ մարզերի և մայրաքաղաք Երևանի բնակչության թվաքանակի փոփոխությունը:

Աղյուսակ 7. ՀՀ քաղաքային և գյուղական բնակչության թվաքանակն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2020 – 2023 թթ. հունվարի 1-ի դրությամբ (հազ մարդ) [8]

	2020	2021	2022	2023
Ընդամենը՝ ՀՀ, որից	2 959.7	2 964.1	2 961.4	2 976.8
ք. Երևան	1 084.0	1092.0	1 092.4	1 098.7
Արագածոտն	124.7	124.5	124.6	125.6
Արարատ	256.6	256.7	256.6	259.2
Արմավիր	263.8	264.0	264.4	266.6
Գեղարքունիք	227.7	227.4	227.8	228.7
Լոռի	213.3	212.6	211.7	211.6
Կոտայք	250.9	251.2	251.1	253.9
Ծիրակ	231.4	231.0	230.4	230.5
Սյունիք	137.3	135.9	134.7	134.5
Վայոց Ձոր	48.5	48.2	47.6	47.7
Տավուշ	121.5	120.6	119.7	119.8

Աղյուսակից երևում է, որ նշված ժամանակահատվածում ՀՀ ընդհանուր բնակչության թվաքանակը փոփոխվել է անկանոն դինամիկայով՝ 2020 թվականի 2 մլն 959 հազարից 2023 թվականին հասնելով 2 մլն 976 հազարի կամ աճելով մոտ 0,5%-ով:

Մայրաքաղաք Երևանում նշված ժամանակահատվածում բնակչության թիվն արձանագրել է դինամիկ աճ՝ 2020 թվականի 1 մլն 84 հազարից 2023 թվականին հասնելով 1 մլն 98 հազարի կամ աճելով մոտ 1,3%-ով: Ինչ վերաբերում է ՀՀ մարզերին, ապա մարզերում բնակչության փոփոխությունը նշված ժամանակահատվածում տեղի է ունեցել տարբեր կերպ: Որոշ մարզերում (Արագածոտն, Արարատ, Արմավիր, Գեղարքունիք, Կոտայք) նշված ժամանակահատվածում հիմնականում արձանագրվել է դինամիկ աճ, իսկ որոշ մարզերում (Լոռի, Ծիրակ, Սյունիք, Վայոց Ձոր, Տավուշ) շարունակական անկում:

Այսպիսով, տարածքային անհամաչափ խնդիրները ՀՀ-ում ներկայացնում են երկրի տարբեր մարզերի զարգացման վրա ազդող գործոնների համալիր: Գյուղատնտեսության, շինարարության, աշխատուժի, գործազրկության

և ժողովրդագրական պատկերի անհամաչափ զարգացումն էական մարտահրավերներ են ստեղծում պետության բնականոն սոցիալ-տնտեսական զարգացման համար: ՀՀ շատ մարզերում, հատկապես գյուղական բնակավայրերում, գյուղատնտեսությունը շարունակում է մնալ տնտեսության առանցքային ոլորտներից մեկը: Մակայն ներդրումների բացակայությունը, հնացած տեխնոլոգիաները և ոռոգման հետ կապված դժվարությունները խոչընդոտում են դրանց արդյունավետ, համաչափ զարգացմանը: Արդյունքում տեղի է ունենում բնակչության արտահոսք գյուղական բնակավայրերից դեպի քաղաքներ, ինչն էլ ավելի է խորացնում տարածքային անհամաչափ զարգացումը:

Եզրակացություն

Մայրաքաղաք Երևանի և Հայաստանի Հանրապետության մարզերի միջև տարածքային զարգացման անհամաչափությունը շարունակում է հանդիսանալ հանրապետության սոցիալ-տնտեսական կայունությանը սպառնացող հիմնական մարտահրավերներից մեկը: Վերոնշյալ խնդիրների արդիականությունը և դրանց երկարաժամկետ բացասական ազդեցությունները անհրաժեշտություն են առաջացնում մշակելու համակարգային և արդյունավետ միջոցառումներ՝ ուղղված այս անհավասարակշռության կարգավորմանը կամ դրա հետևանքների մեղմացմանը:

Տարածքային անհամաչափ զարգացման նվազեցման և մարզերում կայուն ու համաչափ տնտեսական առաջընթաց ապահովելու նպատակով հարկավոր է կիրառել ինտեգրված մոտեցում՝ պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման կառույցների և մասնավոր հատվածի համագործակցությամբ: Միայն համակողմանի և կոորդինացված քաղաքականությունը կարող է հիմք հանդիսանալ ՀՀ ամբողջ տարածքում տարածքային համաչափ և կայուն զարգացման ապահովման համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն (ընդունված՝ 06. 12. 2015), <https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510> (դիտում՝ 15. 02. 2025)
2. «Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման 2024 – 2030 թվականների ռազմավարությունը հավանություն տալու մասին»

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ, <https://www.e-draft.am/ru/projects/7818/justification> (դիտում՝ 07. 02. 2025):

3. «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենք ՀՕ-252-Ն, (ընդունված՝ 14. 11. 2019) <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=137110> (դիտում՝ 27. 02. 2025):
4. Հայաստանի Հանրապետության Վիճակագրական կոմիտե, 2023 թվականի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) եռամսյակային և տարեկան նախնական տվյալները https://armstat.am/file/article/sv_01_24a_112.pdf (դիտում՝ 27. 02. 2025):
5. Հայաստանի Հանրապետության Վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 – 2023 թթ., Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն, <https://armstat.am/am/> (դիտում՝ 27. 02. 2025):
6. Հայաստանի Հանրապետության Վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 – 2023 թթ., Ծինարարություն – <https://armstat.am/am/> (բացված՝ 27. 02. 2025):
7. Հայաստանի Հանրապետության Վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 – 2023 թթ., Աշխատանքի վարձատրություն և աշխատողների թվաքանակ – <https://armstat.am/am/> (բացված՝ 20. 03. 2025):
8. Հայաստանի Հանրապետության Վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 – 2023 թթ., Ժողովրդագրական իրավիճակը 2020 – 2023 թթ. – <https://armstat.am/am/> (բացված՝ 20. 03. 2025):
9. Հայաստանի Հանրապետության Վիճակագրական կոմիտե, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2024 – <https://armstat.am/am/?nid=81&id=2699> (դիտում՝ 27. 02. 2025):
10. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայք-էջ, Տարածքային զարգացման ծրագրեր, «Տարածքային համաչափ զարգացում» – <https://mtad.am/pages/territorial-development-programs> (դիտում՝ 27. 02. 2025):

*Տժնային/Հանձնվել է՝ 26.05.2025
 Рецензирована/Գրախոսվել է՝ 02.06.2025
 Принята/Ընդունվել է՝ 09.06.2025*